



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/113-2024

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31 հուլիսի 2024 թվական

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝
Փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷՒՆ՝

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. Սանոսյան

Էկոնոմիկայի նախարար

Գ. Պապոյան

Շրջակա միջավայրի նախարար

Հ. Սիմիոյան

Կադաստրի կոմիտեի ղեկավար

Ս. Թովմասյան

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի ղեկավար

Ա. Ադիլխանյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Ք. Ղալեյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հարությունյան

Ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Ավանեսյան

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Լ. Հովհաննիսյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ս. Պետրոսյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի Գործադիր տնօրենի տեղակալ

Կ. Բադալյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի Գնումների բաժնի պետ

Հ. Օրդուխանյան

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՋԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇՈՒՐՁ 7 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՔԱՋԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՈՒՐՁ 4 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՆԵԼԻ ՄՈՏԵՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը ներկայացրեց, որ Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի հետ կնքված վարկային համաձայնագրի համաձայն՝ նախատեսվում է իրականացնել շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով իրականացնել միջազգային մրցութային գործընթաց:

Մրցույթի անցկացման նպատակով կազմված մրցութային փաստաթղթերը մշակվել են Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի գնումների ուղեցույցի և համանման մրցույթների համար կիրառելի միջազգային փորձին համապատասխան:

Մասնավորապես, սահմանվել են միջին տարեկան շրջանառության, ֆինանսական կարողությունների, նախկին շինարարական փորձի (այդ թվում՝ թունելների կառուցման, հողային և ասֆալտապատման աշխատանքների իրականացման մասով), անձնակազմի, շինարարական տեխնիկա/սարքավորումների վերաբերյալ ցուցանիշների գնահատման չափանիշներ:

2. Քննարկման ընթացքում ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

Ընդունելի գիտություն՝

1) Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի դիտարկումն առ այն, որ անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկայի գնահատման չափանիշները:

2) Կադաստրի կոմիտեի նախագահ Սուրեն Թովմասյանի դիտարկումն առ այն, որ ստորգետնյա կառուցվածքների շինարարությունը յուրահատուկ մոտեցում է պահանջում, որի պայմաններում կարևոր է տեխնիկական փաստաթղթերի մեջ հստակ պահանջ սահմանել ինժինեռական-գեոդեզիական փաստաթղթերի կազմակերպման մասով, որովհետև այդ աշխատանքների ոչ պատշաճ կազմակերպման հետևանքով շինարարությունը կարող է կրել վնասներ, իսկ մասնագետների հանդեպ անհրաժեշտ է

սահմանել բարձր մասնագիտական չափանիշներ խուսափելու համար հետագա շինարարական բարդություններից, հաշվի առնելով նման շինարարության դժվարությունները և այն հանգամանքը, որ թունելի երկկողմանի հորատման դեպքում թունելում կողմերը ինչ-որ կետում պետք է հատվեն, սակայն առկա են ռիսկեր չհատվելու մասով: Առաջարկվեց ներկայացված փաթեթում հստակ պահանջներ սահմանել ինժինե-ր-գեոդեզիստների և կոնկրետ գեոդեզիական սարքավորումների վերաբերյալ:

3) Գևորգ Պապոյանի դիտարկումն առ այն, որ՝ անհրաժեշտ է մեխանիզմ մտածել Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի կողմից նշված տեխնիկայի մասով գնահատման ռիսկերը մրցույթի ընթացքում նվազեցնելու համար:

4) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի դիտարկումն առ այն, որ մրցութային փաթեթում շինարարական տեխնիկա/սարքավորումների մասով երկու հիմնական գնահատման պահանջ է սահմանվել՝ առկայություն և հասանելիություն, անհրաժեշտ է հասկանալ թե ինչպես է ստուգվելու տեխնիկայի հասանելիությունը:

Նշվեց նաև որ անհրաժեշտ է վեր հանել կառավարության, որպես պատվիրատուի պարտավորությունների ցանկը՝ նվազեցնելու համար որևէ պարտավորության չկատարման հետևանքով պայմանագրի մեկնարկի վրա բացասական ազդելու ռիսկերը:

5) Ընդունել ի գիտություն փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի դիտարկումն առ այն, որ անհրաժեշտ է քննարկել մրցութային պայմանների մեջ նախատեսվածից կարճ կատարման ժամկետ առաջարկելու դեպքում գնահատման տարբերակներ ներառելու հարցը և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև մրցութային երկփուլ գործընթաց կազմակերպելու հնարավորության արդյունավետությունը:

6) Ընդունել ի գիտություն Կադաստրի կոմիտեի նախագահ Սուրեն Թովմասյանի դիտարկումն առ այն, որ ինչպես այս, այդպես էլ այլ՝ առհասարակ մեծ տնտեսական ազդեցություն ունեցող ենթակառուցվածքների շինարարական աշխատանքներ պատվիրելու գործընթացներում անհրաժեշտ է միշտ հետևել ընտրվող կազմակերպությունները (նախագծող, շինարար, ինժեներ) ո՞ր պետությունից են և արդյոք ներառված չեն մրցույթներին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:

7) Ընդունել ի գիտություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանի առաջարկն առ այն, որ մրցութային փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով անհրաժեշտ է ներգրավվել համապատասխան միջազգային փորձագետներ՝ մրցութային փաթեթի ուսումնասիրության, ռիսկերի նվազեցման և մրցույթի սահմանված պայմանների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն և առաջարկություններ ստանալու նպատակով:

3. Քննարկման արդյունքներով հանձնարարվեց՝

1) Ճանապարհային դեպարտամետ հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար Ս. Պետրոսյանին`

1.1. մրցութային գործընթացի ռիսկերի նվազեցման և մրցույթի սահմանված պայմանների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն և առաջարկություններ ստանալու նպատակով ներգրավել միջազգային փորձառություն և մասնագիտական կարողություններ ունեցող համապատասխան փորձագետ(ներ),

1.2. հաշվի առնելով հարցի հրատապությունը, ընտրված փորձագետների հետ ուղիղ գնման ընթացակարգով կնքել պայմանագրեր,

1.3. մրցութային փաստաթղթերը ներկայացնել խորհրդի հաստատմանը փորձագիտական եզրակացությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ